Երկուշաբթի, 8 Յունիս, 2020

Տէրունական Աղօթք

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ իմաստութիւն կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա զիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս։ Ամէն։

Սաղմոս 143

Ողբ եւ Զղջում

Տէր, լսէ իմ աղօթքս, դուն՝ որ հաւատարիմ ես՝ ականջ դիր աղաչանքներուս,
դուն՝ որ արդար ես՝ պատասխան տուր ինծի։
Ես քու ծառադ եմ, զիս դատաստանի մի՛ ենթարկեր,
որովհետեւ չկայ կենդանի արարած մը որ քու դիմացդ արդարանայ։
Թշնամին զիս հալածեց, կեանքս հողին հաւասարցուց,
եւ զիս խաւար աշխարհին բնակիչ դարձուց, արդէն մեռած մարդոց պէս։
Հոգիս խռովքի մէջ է, սիրտս կը սոսկայ։
Կը յիշեմ անցեալ ժամանակները, կը խորհիմ քու բոլոր գործերուդ մասին,
կը խոկամ ըրածներուդ մասին։
Ձեռքերս քեզի կ'երկարեմ օգնութեան համար.
ծարաւ հողի պէս՝ հոգիս ծարաւ է քեզի։
Շուտ ըրէ, Տէր, պատասխան տուր, հոգիս արդէն կը մարմրի,
ինձմէ երես մի՛ դարձներ, մի՛ ձգեր որ ողջ-ողջ գերեզման իջնեմ։
Ամէն առաւօտ ինծի սէրդ լսել տուր, որովհետեւ ես քեզի վստահեր եմ։
Ահա քեզի կը դիմեմ, ցոյց տուր՝ ինչ ձեւով կ'ուզես որ ապրիմ։
Տէր, ազատէ զիս թշնամիներէս, ես քեզ իմ ապաւէնս դարձուցի։
Քու կամքդ կատարել սորվեցուր ինծի, որովհետեւ իմ Աստուածս ես դուն.
քու բարի Հոգիդ զիս ուղիղ ճամբով թող առաջնորդէ։
Տէր, քու անունդ փառաւորելու համար՝ ազատէ կեանքս.
դուն՝ որ արդար ես, այս նեղութենէն դուրս բեր իմ անձս։
Ինծի հանդէպ սէրդ ցոյց տուր. թշնամիներս ոչնչացուր,
բնաջնջէ բոլոր անոնք որոնք ինծի նեղութիւն կու տան, որովհետեւ քու ծառադ եմ ես։

Շարական- Աղօթք

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա։
Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն։
Եւ հիւանդաց բժշկութիւն, նեղեցելոց ազատութիւն։
Արի Աստուած հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց։
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա։

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհի,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս։

ՕՐՈՒԱՆ ՆԻՒԹԸ

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԵՐԵՄԻԱՅԻ
42 ԳԼՈՒԽ

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԻՐԵՆՑ ՀԱՄԱՐ ԵՐԵՄԻԱՅԷՆ ԱՂՕԹՔ ԿԸ ԽՆԴՐԵՆ (42:1-6)

Ահա Գոդոդիայի սպաննութենէն յետոյ, ու Իսրայէլի մնացորդացին կոտորածէն յետոյ, որ միայն շատ քիչեր մնացին, կու գան Երեմիա մարգարէին իրմէ խնդրելու, որ իր Տէր Աստուծոյ աղօթէ, եւ ինչ որ պատասխան տայ ու ճամբայ ցոյց տայ անոր հետեւին: Իսկ Երեմիա սիրով կ'ընդունի այս խնդրանքը եւ կը վստահեցնէ, որ Աստուած ինչ պատասխան որ տայ նոյնպէս պիտի փոխանցէ ժողովուրդին: Բայց Երեմիա կու գայ եւ կը յիշեցնէ որ պիտի աղօթէ իրենց Տէր Աստուծոյն: Անգամ մը եւս ցոյց տալու կապը: Որո՞ւ Տէր Աստուածն է: Երեմիայի թէ ժողովուրդին: Բայց արդէն կարծէք ժողովուրդը կորսնցուցած է կապը իր եւ Աստուծոյ միջեւ: Որովհետեւ Տէրը այսպէս կ'ըսէ. «**Ես ձեզի Աստուած պիտի ըլլամ, իսկ դուք ինծի ժողովուրդ**»: Երեմիա նաեւ կը յիշեցնէ ժողովուրդին պարտականութիւնը Աստուծոյ նկատմամբ:

ԱՍՏՈՒԾՈՑ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԵՐԵՄԻԱՅԻ ԱՂՕԹՔԻՆ (42:7-22)

Տասը օր սպասելէ յետոյ, որպէս պատասխան, Տէրը կը կրկնէ նոյն խոստումը որ տուած էր արդէն. «**Եթէ շարունակէք այս երկրին մէջ բնակիլ, ես ալ ձեզ պիտի շինեմ ու պիտի չփլցնեմ եւ ձեզ պիտի տնկեմ ու պիտի չխլեմ, որովհետեւ ձեզի ըրած չարիքիս վրայով զղջացի: Մի վախնաք Բաբելոնի թագաւորին երեսէն, որովհետեւ ձեզ անոր ձեռքէն ազատելու համար ու ձեզ ապրեցնելու համար ես ձեզի հետ եմ: Ձեզի ողորմութիւններ գտնել պիտի տամ եւ անիկա ձեզի պիտի ողորմի, ձեզ ձեր երկիրը պիտի դարձնէ: Բայց եթէ ըսէք՝ այս երկրին մէջ չենք բնակիր, ու ձեր Տէր Աստուծոյն խօսքին մտիկ չընելով ըսէք. Եգիպտոսի երկիրը երթանք, ուր պատերազմ պիտի չտեսնենք ու փողի ձայն պիտի չլսենք եւ հացի համար անօթի պիտի չմնանք ու հոն պիտի բնակինք. Տէրը այսպէս կ'ըսէ. Եթէ դուք դէպի Եգիպտոս պանդխտանալու երթաք հոն պիտի սպաննուիք ու մնացորդ կամ ազատուած պիտի չմնայ**» (10-17 հմր): Հետաքրքրական է, որ Երեմիա անմիջապէս պատասխան մը չի տար, իր կողմէ ալ պատասխան չի տար, այլ տասը օր Աստուծոյ հետ աղօթքի ճամբով կապի մէջ ըլլալէ յետոյ կու գայ տալու Աստուծոյ պատասխանը: Յաճախ մենք ալ աղօթք կը խնդրենք եւ կ'ուզենք անմիջապէս կապարուի այդ աղօթքը, լսելի դառնայ ու անմիջապէս պատասխան ստանանք, ան ալ մեր ուզած պատասխանը: Բայց Աստուծոյ պարագային այդպէս չէ, որուն արտայայտիչը կը դառնայ Երեմիա մարգարէն: Միւս կողմէ, տասը օրերը նաեւ առիթ են ու եղան որպէսզի անոնց անկեղծութիւնը կամ կեղծաւորութիւնը բացայայտուի, որովհետեւ սպասման վիճակը կու գայ ցոյց տալու թէ որքանով համբերութեամբ կը սպասենք:

Այստեղ կայ «զղջացի» արտայայտութիւնը: Աստուածաշունչ մատեանին մէջ կայ մէկ այլ ուրիշ տեսակի արտայայտութիւն, որ կ'ըսէ. «Աստուած մարդ չէ որ զղջայ»: Ըսելու եղանակ մըն է, որ կը նշանակէ ցաւ զգալ, մտայնութիւնը փոխել: Ահա Տէրը պատրաստ է փոխելու մտադրութիւնը, պայմանաւ, որ ժողովուրդը ինք վերադառնայ Աստուծոյ ու չերթայ Եգիպտոսի ճամբով:

Միւս կողմէ, եթէ Տէրը խոստացեր է մնացորդ մը պահել այդ խոստումին հաւատարիմ է, բայց այդ մնացորդը պէտք է հաւատարիմ ըլլայ Աստուծոյ ու վստահի Աստուծոյ ու չերթայ Եգիպտոս որպէս աւելի ապահով տեղ մը: